

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 4-րդ մասը «ստեղծման» բառից հետո լրացնել «, գործունեության կարգավորման» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետը «չի գրանցվել» բառերից հետո լրացնել «, ընդ որում, սույն կետով սահմանված ժամկետում չի հաշվարկվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ընկերությանը լիցենզիայի նախնական համաձայնության տրամադրման կամ գրանցման ժամկետները կասեցնելու ժամանակահատվածը» բառերով,

2) 1-ին մասը լրացնել «դ» կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«դ) բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի, կարգավորվող շուկայի (այդ թվում՝ ֆոնդային բորսայի) օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերության կամ վճարահաշվարկային կազմակերպության կողմից օրենքով սահմանված ժամկետում լիցենզիայի տրամադրման միջնորդագիր չներկայացվելու (այդ թվում՝ նախորդ միջնորդագիրը մերժվելուց հետո) հիմքով նրա գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում:»:

3) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2. Չկայացած Ընկերության հիմնադիրներին (բաժնետերերին) բաժնետոմսերի դիմաց կատարված վճարները վերադարձվում են Ընկերության ստեղծման (լիցենզավորման) հետ կապված պարտավորությունների նկատմամբ պատասխանատվությունն ըստ հիմնադիրների (բաժնետերերի) բաշխելուց հետո՝ համաձայն Ընկերության ստեղծման մասին պայմանագրի (Ընկերության կանոնադրության):»:

Հոդված 3. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումն ավարտվելուց հետո բաժնետերերի բաժնետոմսերը պետք է գրանցվեն բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ սույն օրենքի VI գլխի դրույթներին համապատասխան, ընդ որում՝ Ընկերության կողմից փաստաթղթային ձևով բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու դեպքում բաժնետոմս ձեռք բերած անձին (բաժնետիրոջը) պետք է տրվի դրա հավաստագիրը:»:

Հոդված 4. Օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) «բ» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությունը (կամ ֆաքսիմիլային վերարտադրությունը), ինչպես նաև այդ կազմակերպության պետական գրանցման տվյալները, լրիվ անվանումը և գտնվելու վայրը.»

2) «ժա» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝  
«ժա) Ընկերության մասնակիցների ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության կնիքի դրոշմվածքը:»:

Հոդված 5. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում «և վարկային կազմակերպությունների» բառերը փոխարինել «, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների» բառերով:

Հոդված 6. Օրենքի 53-րդ հոդվածի «է» և «ը» կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«է) ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությունը (կամ ֆաքսիմիլային վերարտադրությունը), ինչպես նաև այդ կազմակերպության պետական գրանցման տվյալները, լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

ը) Ընկերության մասնակիցների ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության կնիքի դրոշմվածքը:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: